ՎԱՐԿԻ ՀԱՄԱՐԸ 9338-ԱՄ

Վարկային համաձայնագիր

(Պետական հատվածի արդիականացման չորրորդ ծրագիր)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

և

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ

միջև

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (Վարկառու) և ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ (Բանկ) միջև Ստորագրման ամսաթվով թվագրված ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ: Վարկառուն և Բանկը սույնով համաձայնում են հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1.01. Ընդհանուր պայմանները (ինչպես սահմանված են սույն Համաձայնագրի Հավելվածում) տարածվում են սույն Համաձայնագրի վրա և դրա մասն են կազմում:

1.02. Եթե համատեքստով այլ բան չի պահանջվում, ապա սույն Համաձայնագրում մեծատառով օգտագործված եզրույթներն ունեն Ընդհանուր պայմաններում կամ սույն Համաձայնագրի Հավելվածում դրանց վերագրված իմաստը:

ՀՈԴՎԱԾ II. ՎԱՐԿԸ

2.01. Բանկը համաձայնում է Վարկառուին տրամադրել [քսանվեց միլիոն հինգ հարյուր հազար եվրո գումարով (€26,500,000) վարկ, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել Արժույթի փոխարկման միջոցով (Վարկ)՝ սույն Համաձայնագրի Առդիր 1-ում նկարագրված ծրագրի (Ծրագիր) ֆինանսավորմանն աջակցելու համար:

2.02. Վարկառուն կարող է Վարկային միջոցներն առհանել սույն Համաձայնագրի Առդիր 2-ի III բաժնի համաձայն:

2.03. Միանվագ կոմիսիոն վճարը կազմում է Վարկի գումարի մեկ տոկոսի մեկ չորրորդը (0.25%):

2.04. Պարտավորության վճարը տարեկան կազմում է Վարկի Չառհանված մնացորդի մեկ տոկոսի մեկ չորրորդը (0.25%):

2.05. Տոկոսադրույքը կազմում է Հաշվարկային դրույքաչափին գումարած Փոփոխական Սփրեդը կամ այնպիսի դրույքաչափ, որը կարող է կիրառվել Փոխարկումից հետո՝ Ընդհանուր պայմանների 3.02(ե) բաժնի համաձայն:

2.06. Վճարման ամսաթվերը յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ը և օգոստոսի 15-ն են:

2.07. Վարկի մայր գումարը վերադարձվում է սույն Համաձայնագրի Առդիր 3-ի համաձայն:

ՀՈԴՎԱԾ III. ԾՐԱԳԻՐԸ

3.01. Վարկառուն իր հանձնառությունն է հայտնում Ծրագրի նպատակների առնչությամբ: Այդ նպատակով Վարկառուն Ծրագիրն իրականացնում է Վարչապետի աշխատակազմի միջոցով՝ Ընդհանուր պայմանների V հոդվածի դրույթների և սույն Համաձայնագրի Առդիր 2-ի համաձայն:

ՀՈԴՎԱԾ IV. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ, ԴԱԴԱՐԵՑՆԵԼԸ

4.01. Ուժի մեջ մտնելու Լրացուցիչ պայմանները բաղկացած են հետևյալից.

(ա) Վարկառուն ՊԿՀԲՀ-ի միջոցով ընդունել է Ծրագրի գործառնական ձեռնարկը՝ սույն Համաձայնագրի Առդիր 2-ի I.Բ բաժնի դրույթներին համապատասխան:

(բ) Վարկառուն, ՊԿՀԲՀ-ի միջոցով, ընտրել է մինչև վեց հանրային ծառայություններ, որոնք պետք է թվայնացվեն Ծրագրի Մաս 2.2-ի շրջանակներում և սահմանել դրանց համապատասխան ելակետային արժեքները՝ բոլորն էլ Բանկի համար ընդունելի ձևով:

4.02. Ուժի մեջ մտնելու ժամկետը Ստորագրման ամսաթվից հետո հարյուր

ութսուներորդ (180) օրն է:

ՀՈԴՎԱԾ V. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ, ՀԱՍՑԵՆԵՐԸ

5.01. Վարկառուի ներկայացուցիչն իր Ֆինանսների նախարարն է:

5.02. Ընդհանուր պայմանների 10.01 բաժնի նպատակներով՝

ա) Վարկառուի հասցեն է՝

Հայաստանի Հանրապետություն

Երևան, 0010

Մելիք-Ադամյան 1

Կառավարական տուն 1

Ֆինանսների նախարարություն

բ) Վարկառուի էլեկտրոնային հասցեն է՝

Տելեքս՝ Էլ.փոստ՝

374 11 800 156 secretariat@minfin.am

6.03. Ընդհանուր պայմանների 10.01 բաժնի նպատակներով՝

ա) Բանկի հասցեն է՝

International Bank for Reconstruction and Development

1818 H Street, N.W.

Washington, D.C. 20433

United States of America, և

բ) Բանկի էլեկտրոնային հասցեն է՝

Տելեքս՝ Ֆաքս

248423(MCI) կամ 64145(MCI)	1-202-477-6391

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է Ստորագրման ամսաթվի դրությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

_____ կողմից

Լիազորված ներկայացուցիչ

Անունը՝ Տիգրան Խաչատրյան

Պաշտոնը՝ ՀՀ ֆինանսների նախարար

Ամսաթիվը՝ 18 մարտ, 2022թ.

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿ՝

_____ կողմից

Լիազոր ներկայացուցիչ

Անունը՝ Կարոլին Գեգինատ

Պաշտոնը՝ ՀԲ Հայաստանի գրասենյակի ղեկավար

Ամսաթիվը՝ 15 մարտ, 2022թ.

ԱՌԴԻՐ 1

Ծրագրի նկարագրությունը

Ծրագրի նպատակն ընտրված պետական ծառայությունների արդյունավետության բարձրացումը և հասանելիության բարելավումն է բիզնեսի և քաղաքացիների համար:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ մասերից.

1. Պետական կառավարման համակարգի արդիականացումը

1.1. Քաղաքացիական ծառայության կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում՝ հետևյալի միջոցով.

ա. լավագույն միջազգային գործելակերպերի վրա հիմնված ավագ գործադիր կորպուսի մոդելի մշակում և իրականացում,

բ. Վարկառուի մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական համակարգի և գործընթացների կատարելագործում. և

գ. քաղաքացիական ծառայության գրասենյակի արդիականացում՝ ղեկավարումը և տվյալների վրա հիմնված որոշումների կայացումը խթանելու միջոցով:

1.2. Արդարադատության համակարգի ծառայությունների և դատական գործընթացների արդյունավետության բարձրացում և համապատասխանության բարելավում՝ հետևյալի միջոցով.

ա. փաստաթղթերի և բիզնես գործընթացների թվայնացում՝ էլեկտրոնային արխիվի ստեղծմամբ և աջակցելով հիմնական ծառայությունների թվայնացմանը.

բ. Ընտրված արդարադատության ծառայությունների և դատական գործընթացների և ընթացակարգերի թվայնացում և ինտեգրում՝

համակարգերի միջև փոխգործելիության ապահովմամբ:

1.3. Օժանդակություն Ներքին գործերի նոր նախարարության համակարգերի արդիականացմանը՝ հետևյալի միջոցով.

ա. ծրագրակազմի և տեխնիկայի ձեռքբերում՝ հիմնվելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարողությունների և համակարգերի ուսումնասիրության վրա. և

բ. ներքին գործառնությունների թվայնացում և արդիականացում և կարողությունների զարգացում, այդ թվում՝ տվյալների շտեմարանների և ծառայությունների արդիականացման պլանի մշակում և իրականացում:

2. Թվային ծառայությունների մատուցումը

2.1. Հարկային և մաքսային վարչարարության՝ եկամուտների մոբիլիզացման արդյունավետության բարձրացմանն ուղղված համակարգերի արդիականացում ՝ հետևյալի միջոցով.

ա. հարկ վճարողների՝ վեբ համակարգի վրա հիմնված հարկային հաշվի համակարգի կատարելագործում և նորացում.

բ. հասանելի հարկային ծառայությունների իրականացումն ինքնասպասարկման բազմաալիք հավելվածների միջոցով.

գ. էլ. հաշիվների դուրս գրման համակարգից անցում վեբ համակարգի վրա հիմնված տարբերակի՝ օգտագործելով ինֆորմացիոն տեխնոլոգիաների արդի ճարտարապետություն, այդ թվում՝ ստացիոնար համակարգչի (desktop), պլանշետի և բջջային հեռախոսի միջավայրում աշխատելու համար պրոգրեսիվ վեբ հավելվածների մշակում, որոնք ինքնասպասարկումը

հնարավոր են դարձնում.

դ. ինքնահայտարարագրման համակարգի արդիականացում՝ բջջային հավելվածի նախագծմամբ, և

ե. առկա ծրագրակազմի և էլեկտրոնային տեխնիկայի հաշվողական համակարգերի թվայնացում:

2.2. Պետական կառավարման մարմինների կողմից ծառայությունների մատուցման ամրապնդում՝ հետևյալի միջոցով.

ա. պետական կառավարման մարմիններում ընտրված պետական ծառայությունների թվայնացում, այդ թվում՝

i. տվյալների շտեմարանների վերանախագծում և քաղաքականությունների, կարգավորումների և բիզնես գործընթացների վերանայում՝ տվյալների ընդհանուր փաստաթղթահենք կառուցվածքի հիման վրա տվյալների երկարաժամկետ փոխգործելիությունը խթանելու համար.

ii. թվային ազգային ինքնության հստակ գաղափարի ներկայացում.

iii. տվյալների մշակման և հաշվողական ենթակառուցվածքների կատարելագործում.

iv. բազմաալիքային շարժական և ստացիոնար համակարգչով ծառայությունների մատուցման համար պրոգրեսիվ վեբ հավելվածների մշակում.

բ. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՍՊԲ/ԸԲ–ին արձագանքելու կարողությունների ուժեղացում, ՍՊԲ/ԸԲ հետ առնչվող ահազանգերի սպասարկման համար նախատեսված թեժ գծի ստեղծմամբ, աշխատակազմի կարողությունների զարգացմամբ և վերապատրաստմամբ և հաղորդակցական արշավի իրականացում:

2.3. Տեղական կառավարման մարմիններին օժանդակություն՝ տվյալների շտեմարանների, տվյալների ենթակառուցվածքի և հաշվողական համակարգերի վերանախագծմանն առնչվող աշխատանքների փորձարկման միջոցով, որոնք ուղղված են բիզնես գործընթացների համապատասխանեցմանը պետական կառավարման համակարգերի մարմինների բիզնես գործընթացներին և տեղական պետական ծառայությունների թվայնացմանը, այդ թվում՝

ա. բազմաալիքային պրոգրեսիվ վեբ հավելվածների մշակում.

բ. արդի թվային տեխնոլոգիաների իրականացում, այդ թվում՝ վաղ ահազանգման համակարգի նախագծում՝ տվյալներ հավաքելու համար, որը կլիմային առնչվող աղետների մասին ժամանակին նախազգուշացնելու և համայնքապետարաններում այդպիսի տեղեկատվությունը տարածելու հնարավորություն կտա. և

գ. տեղական ընտրված պետական ծառայությունների թվայնացում, այդ թվում՝ «back-office»-ի բիզնես գործընթացների վերանայում՝ պետական ծառայությունների մատուցման բջջային հավելվածներով կառավարման մոտեցմամբ:

3. Տվյալների կառավարումը և թվային ենթակառուցվածքները

3.1. Թվային ենթակառուցվածքի արդյունավետության ու անվտանգության բարձրացում՝ հետևյալի միջոցով.

ա. ամպային ցանցին պատրաստվածության գնահատման և ճանապարհային քարտեզի նախապատրաստում՝ հիբրիդային ամպի ուղղությամբ քաղաքականության բնորոշման համար.

բ. տվյալների դասակարգման վերաբերյալ զեկույցի կազմում՝ Վարկառուի ամպային և հանրային ամպային ցանցում կառավարության տվյալների տեղակայման քաղաքականությունն

ուղղորդելու համար.

գ. ամպային ցանցի գնահատման կառուցակարգի մշակում՝ կառավարության տվյալների տեղակայման համար նպատակահարմար ամպային ծառայություն մատուցողների ընտրության, լիազորման և լիցենզավորման համար.

դ. աղետների և կլիմայական փոփոխությունների նկատմամբ դիմակայուն տվյալների վերականգնման կենտրոնի և կայքերի կրկնօրինակների ստեղծման համար տեխնիկական աջակցություն:

3.2. Կիբեր սպառնալիքների նկատմամբ Վարկառուի թվային ենթակառուցվածքների և ակտիվների դիմակայության բարձրացում՝ հետևյալի միջոցով.

ա. ընտրված հատվածներում առկա տեխնիկայի և ծրագրակազմի կիբերանվտանգության գնահատման իրականացում.

բ. Վարկառուի մարմինների և կառույցների ներսում կիբերանվտանգության գործառույթների համակարգման ինստիտուցիոնալ գնահատման նախապատրաստում.

գ. կիբերանվտանգության մեխանիզմների վերաբերյալ գիտելիքների փոխանակումների կազմակերպում.

դ. տեխնիկական աջակցություն տվյալների պահպանման ենթակառուցվածքի, սպառնալիքի կառավարման և կիբեռանվտանգության ամրապնդման համար:

3.3. Կառավարման տեխնոլոգիաներում (GovTech) տվյալագիտության, մեքենայական ուսուցման և արհեստական բանականության կիրառման բարելավում՝ հետևյալի միջոցով.

ա. տեխնիկական աջակցություն ինտեգրված տվյալների մատրիցով

արհեստական բանականության համակառավարական մոտեցման գաղափարի մշակման համար.

բ. տեխնիկական աջակցություն ընտրված ոլորտներում արհեստական բանականության գաղափարների փորձարկման համար, և.

գ. արհեստական բանականության ուղղությամբ կարողությունների զարգացում, այդ թվում՝ շարունակական նորարարություն, հետազոտություններ և մշակումներ:

4. Ծրագրի կառավարումը

Օժանդակություն Ծրագրի իրականացմանը, այդ թվում, բայց չսահմանափակվելով Ծրագրի իրականացման առնչությամբ Ծրագրի կառավարման խմբին ադմինիստրատիվ աջակցություն, ինչպիսիք են՝ գնումներ, ֆինանսական կառավարում, մոնիթորինգ և գնահատում, կարողությունների զարգացում, Ծրագրի կառավարում, համակարգում և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում ու Ծրագրի օժանդակությամբ իրականացվող բարեփոխումների կլանում:

ԱՌԴԻՐ 2

Ծրագրի կատարումը

Բաժին I. <u>Իրականացման մեխանիզմները</u>

Ա. Ինստիտուցիոնալ մեխանիզմները

1. Վարկառուն պահպանում է Պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովը (ՊԿՀԲՀ), որը պատասխանատու կլինի Ծրագրի վերահսկողության, ռազմավարական ուղղորդման և միջգերատեսչական համակարգման և այլ գործառույթների համար, ներառյալ՝ հանդես գալով որպես Ծրագրի ղեկավար հանձնաժողով և հաստատելով Ծրագրի գործառնական ձեռնարկը և հիմնական ֆինանսական և գնումների փաստաթղթերը, ինչպես հանգամանորեն ներկայացվում է Ծրագրի գործառնական ձեռնարկում: ՊԿՀԲՀ-ն կգլխավորի Վարկառուի փոխվարչապետը կամ վարչապետի աշխատակազմի ղեկավարը, որը նաև կլինի Ծրագրի տնօրենը:

2. Առանց սույն Համաձայնագրի 3.01 բաժնի դրույթների սահմանափակման՝ Վարկառուն Վարչապետի աշխատակազմի (ՎԱ), այդ թվում Վարկառուի փոխվարչապետի գրասենյակի միջոցով իրականացնում է Ծրագիրը՝ սույն Համաձայնագրին և Ծրագրի գործառնական ձեռնարկին համապատասխան, և այս նպատակով Ծրագրի իրականացման ողջ ընթացքում պահպանում է Ծրագրի կառավարման խումբ (ԾԿԽ)՝ Բանկի համար ընդունելի տեխնիկական առաջադրանքով, գործառույթներով, այդ թվում ֆիդուցիար ասպեկտներով, համարժեք թվով և տեխնիկական առաջադրանքով, որակավորմամբ և գործառույթներով մասնագիտական աշխատակազմով, ինչպես սահմանված է Ծրագրի գործառնական ձեռնարկում, որը պատասխանատու կլինի Ծրագրի ամենօրյա իրականացման համար:

3. Ոչ ուշ, քան մինչև 2023թ. դեկտեմբերի 31-ը Վարկառուն ՎԱ-ի միջոցով՝ իրականացնում է հետազոտություն չափելու համար քաղաքացիների գոհունակությունը ընտրված վեց պետական ծառայությունների կատարողականի առնչությամբ, որոնք թվայնացվելու են Ծրագրի 2.2 շրջանակում Բանկի համար ընդունելի ձևով:

   ա) ընտրում է մինչև վեց պետական ծառայություն, որոնք, և

բ) իրականացնում է հետազոտություն՝ [աշխատանքով] քաղաքացիների գոհունակության ներկա մակարդակը չափելու համար:

Բ. Ծրագրի գործառնական ձեռնարկը

1. Վարկառուն ՎԱ-ի միջոցով կազմում, իսկ այնուհետև իրականացնում է Ծրագիրը՝ գործառնական ձեռնարկին համապատասխան (Ծրագրի գործառնական ձեռնարկ), որը ներառում է Ծրագրի իրականացման մանրամասն աշխատանքային գործընթացները, մեթոդները և ընթացակարգերը՝ ներառելով, սակայն չսահմանափակվելով հետևյալով՝ (i) կառավարման և համակարգման մեխանիզմներ, այդ թվում՝ Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսների տեղաբաշխում, (ii) Ծրագրի կատարողական ցուցանիշներ, (iii) մոնիթորինգ ու գնահատում, (iv) ֆինանսական կառավարման ուղենիշներ և ընթացակարգեր, (v) Ծրագրի յուրաքանչյուր Մասի իրականացման եղանակներ, (vi) Ծրագրի իրականացման մեջ տարբեր մարմինների և շահագրգիռ կողմերի դերեր ու պարտականություններ, և (vii) Անձնական տվյալների հավաքում և մշակում՝ միջազգային արդյունավետ գործելակերպին համապատասխան, և բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը գրավոր այլ համաձայնության կգա, Վարկառուն չպետք է փոփոխի կամ հրաժարվի կամ թույլատրի փոփոխել կամ հրաժարվել Ծրագրի գործառնական ձեռնարկի որևէ դրույթից:

2. Ծրագրի գործառնական ձեռնարկի և սույն Համաձայնագրի դրույթների միջև հակասության դեպքում գերակայում են սույն Համաձայնագրի դրույթները:

Գ. Բնապահպանական և սոցիալական ստանդարտները

1. Վարկառուն ՎԱ-ի միջոցով ապահովում է, որ Ծրագիրն իրականացվի Բնապահպանական և սոցիալական ստանդարտների համաձայն՝ Բանկի համար ընդունելի ձևով:

2. Առանց վերոնշյալ 1-ին պարբերության սահմանափակման՝ Վարկառուն ՎԱ-

ի միջոցով ապահովում է Ծրագրի իրականացումը Բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլանին (ԲՍՀՊ) համապատասխան՝ Բանկի համար ընդունելի ձևով: Այդ նպատակով Վարկառուն ՎԱ-ի միջոցով ապահովում է, որ՝

ա) ԲՍՀՊ-ում նշված միջոցառումներն ու գործողություններն իրականացվեն պատշաճ ջանասիրությամբ և արդյունավետությամբ, ինչպես նախատեսված է ԲՍՀՊ-ում.

բ) ԲՍՀՊ-ի իրականացման ծախսերը հոգալու համար բավարար միջոցներ հասանելի լինեն.

գ) ԲՍՀՊ-ի իրականացման համար վարվեն կարգեր և ընթացակարգեր, և որակավորված և փորձառու աշխատակազմ ներգրավվի՝ բավարար թվով, ինչպես նախատեսված է ԲՍՀՊ-ում, և

դ) ԲՍՀՊ-ն կամ դրա որևէ դրույթ չփոփոխվի, չեղյալ չհամարվի, չկասեցվի կամ դրանից չհրաժարվեն՝ բացառությամբ այն դեպքի, երբ ԲՍՀՊ-ում սահմանված կարգով Բանկն այլ գրավոր համաձայնության կգա, և ապահովի, որ վերանայված ԲՍՀՊ –ն դրանից անմիջապես հետո հրապարակվի:

3. ԲՍՀՊ-ի և սույն Համաձայնագրի դրույթների միջև որևէ անհամապատասխանության դեպքում գերակայում են սույն Համաձայնագրի դրույթները:

4. Վարկառուն ՎԱ-ի միջոցով ապահովում է, որ՝

ա) անհրաժեշտ բոլոր միջոցները ձեռնարկվեն հավաքելու, կազմելու և ԲՍՀՊ–ում սահմանված պարբերականությամբ Բանկին կանոնավոր հաշվետվությունների միջոցով, իսկ Բանկի կողմից նման պահանջ ներկայացվելու դեպքում՝ առանձին հաշվետվությամբ կամ հաշվետվություններով ԲՍՀՊ-ին և դրանում հիշատակված բնապահպանական և սոցիալական փաստաթղթերին

համապատասխանության կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվությունը շուտափույթ ներկայացնելու համար՝ բոլոր այդպիսի հաշվետվությունները Բանկի համար ընդունելի ձևով և բովանդակությամբ, ներկայացնելով, ի թիվս այլնի՝ (i) ԲՍՀՊ-ի իրականացման կարգավիճակը, (ii) ԲՍՀՊ-ի իրականացումը խոչընդոտող կամ խոչընդոտելու սպառնալիք ներկայացնող պայմանները, եթե այդպիսիք կան, և (iii) ուղղիչ և կանխարգելիչ միջոցառումները, որոնք ձեռնարկվել են կամ պահանջվում է ձեռնարկել այդ պայմաններին արձագանքելու համար, և

բ) Բանկն անհապաղ ծանուցվի Ծրագրի հետ կապված կամ Ծրագրի վրա ազդեցություն ունեցող ցանկացած միջադեպի կամ պատահարի մասին, որը ունեցել է կամ հավանական է, որ նշանակալի անբարենպաստ ազդեցություն կունենա շրջակա միջավայրի, ազդակիր համայնքների, հանրության կամ աշխատողների վրա՝ ԲՍՀՊ-ին, դրա մեջ նշված բնապահպանական և սոցիալական փաստաթղթերին ու Բնապահպանական և սոցիալական ստանդարտներին համապատասխան:

5. Վարկառուն ՎԱ-ի միջոցով ստեղծում, հանրայնացնում, պահպանում և գործարկում է բողոքների հասանելի մեխանիզմ՝ Ծրագրի ազդակիր մարդկանցից խնդիրներ և բողոքներ ստանալու և դրանց լուծումը դյուրին դարձնելու համար, և ձեռնարկում բոլոր անհրաժեշտ և պատշաճ միջոցները՝ նման խնդիրների և բողոքների կարգավորման կամ կարգավորումը դյուրին դարձնելու համար՝ Բանկի համար ընդունելի ձևով:

Բաժին II. Ծրագրի մոնիթորինգը, հաշվետվությունների ներկայացումը և գնահատումը

1. Վարկառուն ԾԿԽ միջոցով Ծրագրի յուրաքանչյուր Հաշվետվություն, որն ընդգրկում է օրացուցային կիսամյակը, Բանկին է ներկայացնում ոչ ուշ, քան յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ավարտից հետո քառասունհինգ

(45) օր հետո:

2. Բացառությամբ այն դեպքերի, երբ սույն Համաձայնագրի շրջանակում կարող է բացահայտ այլ բան պահանջվել կամ թույլատրվել կամ Ընկերակցության կողմից կարող է բացահայտ պահանջվել, սույն Համաձայնագրի Առդիր 1-ում նկարագրված աշխատանքների հետ կապված ցանկացած տեղեկություն, հաշվետվություն կամ փաստաթուղթ տրամադրելիս Վարկառուն ապահովում է, որ այդ տեղեկությունը, հաշվետվությունը կամ փաստաթուղթն Անձնական տվյալներ չներառեն:

Բաժին III. Վարկի միջոցների առհանումը

Ա. Ընդհանուր

Չսահմանափակելով Ընդհանուր պայմանների II հոդվածի դրույթները և Մասհանման և ֆինանսական տեղեկությունների վերաբերյալ գրությանը համապատասխան՝ Վարկառուն կարող է Վարկի միջոցներն առհանել՝ ա) Թույլատրելի ծախսերը ֆինանսավորելու և բ) վճարելու համար Միանվագ կոմիսիոն վճարը հատկացված գումարի չափով, և եթե կիրառելի է, մինչև հետևյալ աղյուսակում յուրաքանչյուր Կատեգորիայի համար սահմանված տոկոսի չափով.

Կատեգորիա	**Հատկացված վարկային միջոցների գումար (արտահայտված եվրոյով)**	**Ֆինանսավորման ենթակա ծախսերի տոկոս (բացառությամ հարկերը)**
1) Ապրանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ, վերապատրաստում և աշխատաժողովներ և Ծրագրի Գործառնական	26,433,750	100%

ծախսեր		
2) Միանվագ կոմիսիոն վճար	66,250	Սույն Համաձայնագրի 2.03 բաժնի համաձայն վճարման ենթակա գումար՝ Ընդհանուր պայմանների 2.07 (բ) բաժնին համապատասխան
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ	26,500,000	

Բ. Առհանման պայմանները, առհանման ժամանակահատվածը

1. Չնայած վերոնշյալ Մաս Ա-ի դրույթներին՝ որևէ առհանում չի իրականացվում մինչև Ստորագրման ամսաթիվը կատարված վճարումների համար:

2. Փակման ամսաթիվը 2028թ. մարտի 31-ն է:

ԱՌԴԻՐ 3

Պարտավորության հետ կապված մարումների ժամանակացույց

Հետևյալ աղյուսակում սահմանվում են Վարկի Մայր գումարի վճարման ամսաթվերը և Մայր գումարի Վճարման յուրաքանչյուր ամսաթվին վճարման ենթակա՝ Վարկի ընդհանուր մայր գումարը (Մարվող գումարի մասնաբաժին):

Մայր գումարի հավասարաչափ մարումներ

Մայր գումարի վճարման ամսաթիվ	Մարվող գումարի մասնաբաժին
Յուրաքանչյուր փետրվարի 15-ին և օգոստոսի 15-ին Սկսած 2037թ. փետրվարի 15-ին Մինչև 2046թ. օգոստոսի 15	4.76%
2047թ. փետրվարի 15-ին	4.8%

ՀԱՎԵԼՎԱԾ

<u>Սահմանումներ</u>

1. Ընդհանուր պայմանների Հավելվածի 6-րդ պարբերության նպատակներով «Հակակոռուպցիոն ուղենիշներ» նշանակում է 2006թ. հոկտեմբերի 15-ով թվագրված և 2011թ. հունվարին վերանայված և 2016թ. հուլիսի 1-ի դրությամբ գործող՝ «ՎԶՄԲ վարկերի և ԶՄԱ փոխառությունների և դրամաշնորհների միջոցով ֆինանսավորվող ծրագրերում խարդախության և կոռուպցիայի դեպքերի կանխարգելման և դրանց դեմ պայքարի վերաբերյալ ուղենիշներ»:

2. «Կատեգորիա» նշանակում է սույն Համաձայնագրի Առդիր 2-ի III.Ա բաժնում բերված աղյուսակում սահմանված կատեգորիա:

3. «Բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլան» կամ «ԲՍՀՊ» նշանակում է Ծրագրի մասով բնապահպանական և սոցիալական հանձնառությունների պլան՝ թվագրված 2022թ. փետրվարի 25-ը, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել՝ դրա դրույթներին համապատասխան, որոնցով էական միջոցառումներ և գործողություններ են սահմանվում, որոնք Վարկառուն պետք է իրականացնի կամ որոնց իրականացումը պետք է ապահովի՝ հնարավոր բնապահպանական և սոցիալական ռիսկերին և Ծրագրի ազդեցություններին արձագանքելու համար, այդ թվում՝ գործողությունների և միջոցառումների ժամկետները, ինստիտուցիոնալ, կադրային, վերապատրաստման, մոնիթորինգի և հաշվետվությունների հետ կապված միջոցառումները, ինչպես նաև ցանկացած բնապահպանական և սոցիալական փաստաթուղթ, որը դրա շրջանակներում պետք է նախապատրաստվի:

4. «Բնապահպանական և սոցիալական ստանդարտներ» կամ «ԲՍՍ» նշանակում է հավաքականորեն՝ (i) «Բնապահպանական և սոցիալական 1-ին ստանդարտ. Բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների գնահատումը և կառավարումը», (ii) «Բնապահպանական և սոցիալական 2-րդ ստանդարտ. Աշխատուժը և աշխատանքային պայմանները», (iii) «Բնապահպանական և սոցիալական 3-րդ ստանդարտ. Ռեսուրսների արդյունավետություն և աղտոտման կանխարգելում ու կառավարում», (iv) «Բնապահպանական և սոցիալական 4-րդ ստանդարտ. Համայնքի առողջություն և անվտանգություն», (v) «Բնապահպանական և սոցիալական 5-րդ ստանդարտ. Հողի ձեռքբերում, հողի օգտագործման սահմանափակումներ և հարկադիր վերաբնակեցում», (vi) «Բնապահպանական և սոցիալական 6-րդ ստանդարտ. Կենսաբազմազանության պահպանում և կենդանի բնական ռեսուրսների կայուն կառավարում», (vii) «Բնապահպանական և սոցիալական 7-րդ ստանդարտ. Բնիկ ժողովուրդներ/ենթասահարյան պատմականորեն թերսպասարկված ավանդական տեղական համայնքներ», (viii) «Բնապահպանական և սոցիալական 8-րդ ստանդարտ. Մշակութային ժառանգություն», (ix) «Բնապահպանական և սոցիալական 9-րդ ստանդարտ. Ֆինանսական միջնորդներ», (x) «Բնապահպանական և սոցիալական 10-րդ ստանդարտ. Շահագրգիռ կողմերի ներգրավում և տեղեկատվության հրապարակում», ուժի մեջ է 2018թ. հոկտեմբերի 1-ից, ինչպես հրապարակվել է Բանկի կողմից:

5. «ՍՊԲ/ԸԲ» նշանակում է սեռով պայմանավորված բռնություն և (կամ) ընտանեկան բռնություն:

6. «Ընդհանուր պայմաններ» նշանակում է «ՎԶՄԲ ֆինանսավորման, ներդրումային ծրագրերի ֆինանսավորման մասով Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի ընդհանուր պայմանները»՝ թվագրված 2018թ. դեկտեմբերի 14-ով (վերանայված՝ 2020թ. օգոստոսի 1-ին, 2020թ. դեկտեմբերի 21-ին, 2021թ. ապրիլի 1-ին և 2022թ. հունվարի 1-ին):

7. «GovTech» նշանակում է պետական հատվածի արդիականացման համակառավարական մոտեցում, որով շեշտադրվում են պետական հատվածի արդիականացման հետևյալ կողմերը՝ համատարած հասանելի քաղաքացիակենտրոն պետական ծառայություններ, համակառավարական մոտեցում թվային կառավարման վերափոխմանը և կառավարման պարզ, արդյունավետ և թափանցիկ համակարգեր:

8. «Ներքին գործերի նախարարություն» նշանակում է Վարկառուի Ոստիկանության բարեփոխումների ռազմավարությամբ նախատեսված՝ Վարկառուի կողմից ստեղծվող նախարարություն կամ դրա ցանկացած նախորդող կամ իրավահաջորդ, որն ընդունելի է Բանկի համար:

9. «Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն» նշանակում է Վարկառուի Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն կամ դրա ցանկացած իրավահաջորդ, որն ընդունելի է Բանկի համար:

10. «Գործառնական ծախսեր» նշանակում է ԾԿԽ-ի կողմից կրած Ծրագրի իրականացման հետ կապված հավելյալ ծախսերի համար ողջամիտ ծախսերը՝ հաստատված Բանկի կողմից, ներառյալ ավտոտրանսպորտային միջոցների շահագործման և պահպանման, հաղորդակցության և ապահովագրության ծախսերից, բանկային գանձումներից, վարձակալական ծախսերից, գրասենյակի (և գրասենյակային սարքավորումների) պահպանման, կոմունալ ծախսերից, փաստաթղթերի կրկնօրինակման/տպելու, սպառվող պարագաների, Ծրագրի իրականացման հետ կապված Ծրագրի աշխատակազմի գործուղման ծախսից (այդ թվում՝ գիշերավարձ, տեղափոխում և օրապահիկ) ու Ծրագրի պայմանագրային աշխատակիցների աշխատավարձերից, բժշկական ապահովագրությունից և սոցիալական նպաստներից (սակայն չներառելով Վարկառուի քաղաքացիական ծառայության պաշտոնյաների աշխատավարձերը):

11. «Անձնական տվյալներ» նշանակում է ցանկացած տեղեկություն, որը վերաբերում է նույնականացված անձին կամ այն անձին, որին հնարավոր է

նույնականացնել: Անձը, որին հնարավոր է նույնականացնել, այն անձն է, որը ողջամիտ միջոցներով ուղղակիորեն կամ անուղղակիորեն կարող է նույնականացվել՝ տվյալների շրջանակում հղում անելով որևէ հատկորոշչի կամ հատկորոշիչների համակցության կամ հասանելի այլ տեղեկությունների հետ տվյալների համակցմամբ: Հատկորոշիչները, որոնք կարող են օգտագործվել այն անձանց նույնականացման համար, որոնց հնարավոր է նույնականացնել, ներառում են, սակայն չեն սահմանափակվում անուն-ազգանունով, նույնականացման համարով, գտնվելու վայրի տվյալներով, առցանց նույնականացուցչով, մեթատվյալներով և անձի ֆիզիկական, ֆիզիոլոգիական, գենետիկ, մտավոր, տնտեսական, մշակութային կամ սոցիալական ինքնությանը հատուկ գործոններով:

12. «ԾԿԽ» կամ «Ծրագրի կառավարման խումբ» նշանակում է սույն Համաձայնագրի Առդիրի 2-ի Ի.Ա.2 բաժնում հիշատակվող միավորը:

13. «ՎԱ» կամ «Վարչապետի աշխատակազմ» նշանակում է Վարկառուի վարչապետի աշխատակազմը կամ դրա ցանկացած իրավահաջորդ, որն ընդունելի է Բանկի համար:

14. «Հայաստանի Հանրապետության ոստիկանություն» նշանակում է Վարկառուի Ոստիկանության դեպարտամենտը կամ դրա ցանկացած իրավահաջորդ, որն ընդունելի է Բանկի համար:

15. «Գնումների կանոնակարգեր» Ընդհանուր պայմանների Հավելվածի 87-րդ պարբերության նպատակներով նշանակում է 2020թ. նոյեմբերով թվագրված՝ «ՆԾՖ վարկառուների համար Համաշխարհային բանկի գնումների կանոնակարգերը»:

16. «Ծրագրի գործառնական ձեռնարկ» նշանակում է սույն Համաձայնագրի Առդիր 2-ի Ի.Բ բաժնում հիշատակվող գործառնական ձեռնարկը:

17. «ՊԿՀԲՀ» նշանակում է Պետական կառավարման հատվածի բարեփոխումների հանձնաժողով, որը ստեղծվել է Վարչապետի 1999թ.

սեպտեմբերի 3-ի թիվ 544 որոշմամբ, կամ դրա ցանկացած իրավահաջորդ, որն ընդունելի է Բանկի համար:

18. «Ստորագրման ամսաթիվ» նշանակում է այն երկու ամսաթվերից վերջինը, երբ Վարկառուն և Բանկը ստորագրել են սույն Համաձայնագիրը, և այդպիսի սահմանումը տարածվում է Ընդհանուր պայմաններում «Վարկային համաձայնագրի ամսաթվին» կատարվող բոլոր հղումների վրա:

19. «Պետական եկամուտների կոմիտե» նշանակում է Վարկառուի հարկային և մաքսային մարմինը կամ դրա ցանկացած իրավահաջորդ, որն ընդունելի է Բանկի համար:

20. «Վերապատրաստում և աշխատաժողովներ» նշանակում է Ծրագրի շրջանակում իրականացված վերապատրաստման և աշխատաժողովների համար Բանկի կողմից հաստատված ողջամիտ ծախսերը, այդ թվում՝ վերապատրաստման և աշխատաժողովի մասնակիցների ուսման վարձ, գործուղման և ապրուստի ծախսեր, դասընթացավարների և աշխատաժողովի բանախոսների ծառայությունների ապահովման հետ կապված ծախսեր, վերապատրաստման և աշխատաժողովի հարմարությունների վարձակալության, վերապատրաստման և աշխատաժողովի նյութերի նախապատրաստման և վերարտադրման և վերապատրաստման դասընթացի և աշխատաժողովի նախապատրաստման և իրականացման հետ անմիջականորեն կապված այլ ծախսեր (սակայն չներառելով ապրանքները և խորհրդատվական ծառայությունները):

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև ստորագրված «Պետական հատվածի արդիականացման չորրորդ ծրագիր» վարկային համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն